




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




# ՄԻՈՒԵՐ ՄԱՐԴ

Յովհաննէս Թումանյան

ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ՝ ԼԵՈՆԻ ԹԱՇԷԱՆ

2847



891.995

Թ-95







891.99 Ա  
Թ - 95

Հովհաննէս Բաւմանեան

0/0

Ա.Տ

# ՄԻՒՆԵՐ ՄԱՐԴ

ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ ԼԵՈՆԻ ԹԱՇՃԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՆԱՅԻՐԻ» ԳՐԱՏՈՒՆ-ՏՊԱՐԱՆԻ



Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան չարչարում էր, դարձեալ միևնոյն աղքատն էր մնում:

Յուսահատւած մի օր նա վեր կացաւ, թէ՛ պէտք է գնամ գտնեմ Աստծուն, տեսնեմ ես երբ պէտք է պրծնեմ այս աղքատութիւնից ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ճանապարհին մի գայլ պատահեց.

— Առաջ բարի, մարդ-ախպէր, ո՞ւր ես գնում,  
— հարցրեց գայլը:

«Գնում եմ Աստծու մօտ, — պատասխանեց աղքատը,  
— դարդ ունեմ ասելու»:

— Դէ որ գնաս Աստծու մօտ, — խնդրեց գայլը,  
— ասա մի սոված գայլ կայ, գիշեր-ցերեկ ման է գալիս սար ու ձոր, ուտելու բան չի գտնում, ասա՛ մինչև ե՞րբ պէտք է սոված մնայ. որ ստեղծել ես՝ ինչո՞ւ չես կերակուր հասցնում:

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

100527 - 42



1051-2006













«Լա՛ւ», — ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը:  
Շատ գնաց թէ քիչ, պատահեց մի սիրուն աղջկայ:  
— Ո՞ւր ես գնում, ախպէր, — հարցրեց աղջիկը:  
«Գնում եմ Աստծու մօտ»:

— Երբ որ Աստծուն տեսնես, — աղաչեց սիրուն աղ-  
ջիկը, — ասա այսպիսի մի աղջիկ կայ՝ ջահել, առողջ, հա-  
րուստ, բայց չի կարողանում ուրախանալ, բախտաւոր  
զգալ իրան, ի՞նչ պիտի լինի նրա ճարը:





«Կասեմ», խոստացաւ ճամբորդն ու գնաց. պատահեց մի ծառի, որ թէև ջրափին էր կանգնած, բայց չոր էր:  
— Ո՞ւր ես գնում, ա՛յ ճամբորդ, — հարցրեց չոր ծառը:

«Գնում եմ Աստծու մօտ»:

— Դէ կանգնի՛ր, մի երկու խօսք էլ ես ապսպրեմ,  
— խնդրեց չոր ծառը, Աստծուն կասես, այս ի՞նչ բան է,  
բուսել եմ այս պարզ ջրի ափին, բայց ամառ-ձմեռ չոր եմ մնում. ե՞րբ պէտք է ես էլ կանաչեմ:

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը:














«Բարի օր», — ասաց աղքատն ու կանգնեց Աստու առաջին:

— Բարով եկար, — պատասխանեց Աստուած, — ի՞նչ ես ուզում:

«Էն եմ ուզում, որ ամեն մարդի էլ հաւասար աչքով մտիկ անես, մէկին աւար չանես, միւսին խաւար. ես այնքան եմ տանջւում, աշխատում եմ, էլ չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ, իսկ շատերը, որ իմ կէսի չափ էլ չեն աշխատում, հարուստ ու հանգիստ ապրում են»:

— Դէ գնայ, հիմի կը հարստանաս, քո բախտը տւեցի, գնայ վայելի՛ր, — ասաց Աստուած:

«Էլ բան ունեմ ասելու, տէ՛ր», — ասաց աղքատն ու պատմեց սոված գայլի, սիրուն աղջկայ ու չոր ծառի ապսպրանքը:

Աստուած բոլորի պատասխանը տւեց, և աղքատը շնորհակալութիւն արաւ ու հեռացաւ:





Յետոյ սիրուն աղջիկը պատահեց ու ճամբորդի  
առաջը կտրեց.

— Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

«Աստուած ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ  
կեանքի ընկեր գտնես, այն ժամանակ էլ տխուր չես լինիլ,  
ուրախ ու երջանիկ կը լինես»:

— Դէ որ այդպէս է, արի՛ դու եղիր իմ կեանքի  
մտերիմ ընկերը, — թախանձեց աղջիկը ճամբորդին:

«Զէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ,  
Աստուած ինձ բախտ է տւել, պէտք է գնամ իմ բախտը  
գտնեմ, վայելեմ», — ասաց աղքատն ու հեռացաւ:














Ճանապարհին սպասում էր սոված գայլը, հեռից հենց որ տեսաւ ճամբորդին, վազեց առաջը կտրեց:

— Հը, Աստուած ի՞նչ ասաց:

«Ախպէր, Աստծու մօտ գնալիս քեզանից յետոյ մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ պատահեցին. աղջիկն ապսպրեց, թէ ինչու ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թէ՛ ինչո՞ւ է գարուն, ամառ չոր: Աստծուն պատմեցի, ասաց՝ աղջկանն ասա իրան համար մի կեանքի ընկեր գտնի՝ կը բախտաւորւի, ծառին էլ ասա, քո տակին ոսկի կայ, պէտք է այդ ոսկին հանեն, արմատներդ հողին հասնեն, որ կանաչես: Եկայ իրանց պատմեցի Աստծու խօսքերը. ծառն ասաց, դէ արի, հանի՛ր ոսկին տար, աղջիկն էլ թէ՛ ես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի, չէ՛, ախպէր, չեմ կարող, Աստուած ինձ բախտ է տւել, պէտք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ»:

— Իսկ ինձ համար ի՞նչ ասաց Աստուած, — հարցրեց սոված գայլը:

«Քեզ համար էլ ասաց՝ սոված ման կը գաս՝ մինչև մի անխելք մարդ կը գտնես, կուտես, կը կշտանաս»:

— Էլ քեզանից անխելք մարդ ո՞րտեղից գտնեմ, որ ուտեմ, — ասաց գայլն ու կերաւ անխելք աղքատին:



«ՆԱՅԻՐԻ» ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻԻ 13

ԳԻՆԸ՝ 500 ՌԻԱԼ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 8 ԴՈԼԱՐ

ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝ «ՆԱՅԻՐԻ» ԳՐԱՏՈՒՆ

ԹԵՀՐԱՆ ՊՈԼՈՏԱՅ ԷՆՂԵԼԱՐ, ԳԱԼԷՋ, ԹԻԻ 1022

PUBLISHED BY NAYIRI BOOKSHOP  
1022, AVENUE ENGHELAB, COLLEGE,  
TEHRAN 11339 - IRAN.



1051-2006

ՆԱՄ ԿՏԱԲ : ՄՐԴ ՆԱԴԱՆ

ՆՈՅՏՆԴԵ : ԽՈԽԱՆՏ ԽՈՄԱՆԻԱՆ

ՆԱՏԻՐ : ՆԱԻՐԻ

ԽԻՐԱՅ : ԲՆՉԵԶԱՐ ՆՏԽԵ

ՆՈՅԻԲ ԿԱԲ : ՎՈԼ 1363

ԿԱԲ : ՏՐԿԵՏ ՏԵԽԱՄԻ ԱՖՏ

ԽԿ ԿԱԲ , ԽԳԼԻԴ , ԱԳԽԲԱՏ Վ ԵԿՏԵՐԴԱՐԻ ՄԽՓՈՅ Վ ՄՆԽՏԵՐ ԲԵ ՆԱՏԻՐ ՄԻԲԱՏԻԴ .



284K 500

20 13

ՀՀ Ազգային գրադարան



NL0033324



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՆԱՅԻՐԻ» ԳՐԱՏՈՒՆ-ՏՊԱՐԱՆԻ

